ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

Դաստիարակների մասնախմբի նիստ

Նիստը կայացել է 2025-2026 ուսումնական տարվա մայիսի 29–ին:

Նիստին ներկա էին մասնախմբի բոլոր անդամները:

Օրակարգում

1. Մասնախմբի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Մ.Հարությունյան):
2. Նախորդ նիստի որոշումների կատարման մասին զեկուցում (զեկուցող՝ Մ.Հարությունյան):
3. ԱՈՒՊ –ների քննարկում և ամփոփում (զեկուցող՝ Մ.Հարությունյան):
4. Ուսումնական տրվա ամփոփման շուրջ իրականացվող աշխատաններ
5. Դաստիարակների վերապատրաստում:
6. Գույքագրում

Լսեցին՝

1. Մասնախմբի աշխատանքների համակարգող Մ. Հարությունյանը ներկայացրեց մայիսի 29-ի նիստի օրակարգը՝ բաղկացած 5 հարցից:

Լսեցին՝

2. Մ.Հարությունյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ իրականացվել են նախատեսված բոլոր գործողությունները: Ապահովվել է դաստիարակների ակտիվ մասնակցությունը պլանավորված էքսկուրսիաների, տարբեր ուսուցողական աշխատանքների կազմակերպմանը, ինչպես նաև «Վերջին դաս» միջոցառման կազմակերպմանը և իրականացմանը: Դաստիարակների կողմից կազմակերպվել և իրականացվել է դպրոցի բակում ներդպրոցական ֆլեշմոբ՝ ապահովելով ուսուցիչների և սովորողների համագործակցությունը նաև այս ձևաչափով:

Լսեցին՝

3. Մասնախմբի ղեկավար Մ. Հարությունյանը ներկայացրեց, որ ԱՈՒՊ-ների հերթական երկամսյա քննարկումներին ընդառաջ դաստիարակների կողմից իրականացվել են սովորողների զարգացման, արձանագրված ձեռքբերումների և առկա դժվարությունների վերաբերյալ քննարկումներ դասավանդող ուսուցիչների հետ: Ամփոփվել են սովորողների առաջընթացի արդյունքները և ուսումնասիրվել հետագա աջակցության կարիքները:

Արտահայտվեցին

Մասնախմբի անդամները, անդրադառնալով քննարկումների արդյունքներին, նշեցին, որ սովորողների մեծ մասի մոտ արձանագրվել է դրական առաջընթաց վարքային, սոցիալական, հաղորդակցական և/կամ ինքնասպասարկման հմտությունների զարգացման ոլորտներում:

Լսեցին՝

4. Ուսումնական տարվա ամփոփման շրջանակում մասնախմբի ղեկավարը անդրադարձավ հաշվետվությունների կազմման աշխատանքներին և ներկայացման նոր ձևաչափին: Մասնախմբի անդամների կողմից ուսումնասիրվեց և քննարկվեց տարեկան հաշվետվության նոր ձևաչափը, որը

գնահատվեց որպես ավելի համակարգված և արդյունավետ՝ հնարավորություն ընձեռելով առավել ամբողջական ներկայացնել իրականացված աշխատանքները:

Լսեցին՝

5. Մասնախմբի ղեկավարը տեղեկացրեց, որ հունիսին նախատեսվում է իրականացնել «Մասնագիտական այրման կանխարգելում և հուզական ռեսուրսների վերականգնում» թեմայով դասընթացը դպրոցի հոգեբանի կողմից: Հորդորեց մասնախմբի անֆամներին պարտադիր ներկա լինել այդ դասընթացին:

Լսեցին՝

6. Քննարկվեց դասարաններում առկա գույքի հաշվառման գործընթացը: Մ. Հարությունյանը հրահանգեց դասասենյակներում իրականացնել առկա գույքի ստուգում, առանձնացնել վերանորոգման կամ փոխարինման կարիք ունեցող գույքային միավորները և հաշվառել դասարանում առկա ընդհանուր գույքը:

Որոշեցին

1. Հաստատել մասնախմբի 2026թ. մայիսի 29-ի նիստի օրակարգը:
2. Նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ ներկայացված զեկույցն ընդունել ի գիտություն՝ արձանագրելով, որ նախատեսված բոլոր գործողությունները իրականացվել են սահմանված կարգով և պատշաճ մակարդակով, ապահովվել է դաստիարակների ակտիվ մասնակցությունը էքսկուրսիաների, ուսուցողական աշխատանքների և «Վերջին դաս» միջոցառման կազմակերպման ու իրականացման գործընթացներում, ինչպես նաև դրական գնահատել դաստիարակների կողմից կազմակերպված դպրոցի բակում իրականացված ներդպրոցական ֆլեշմոբը՝ որպես արդյունավետ համագործակցության ձևաչափ:
3. Ապահովել դաստիարակների շարունակական ակտիվ ներգրավվածությունը ԱՈՒՊ-ների իրականացման և գնահատման գործընթացներում՝ հաշվի առնելով իրականացված քննարկումների արդյունքները, ամփոփված առաջընթացը և սովորողների մոտ արձանագրված դրական զարգացումները:
4. Հավանություն տալ հաշվետվությունների ներկայացման նոր ձևաչափին և այսուհետ առաջնորդվել դրանով՝ այն համարելով ավելի համակարգված և արդյունավետ:
5. Խրախուսել դաստիարակների շարունակական մասնագիտական զարգացումը և մասնակցությունը վերապատրաստումներին:
6. Քննարկված հարցի հիման վրա հանձնարարել դասասենյակներում իրականացնել առկա գույքի ստուգում և հաշվառում, առանձնացնել վերանորոգման կամ փոխարինման կարիք ունեցող գույքային միավորները, ինչպես նաև ապահովել դասարաններում առկա գույքի ամբողջական և ճշգրիտ հաշվառումը:

Դաստիարակչական աշխատանքների համակարգող՝ Մ. Հարությունյան

Քարտուղար՝ Ռ. Բաղալյան

03.06.2026